ՀՈԳԵՒՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ*

ԼԵԶՎԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԳԼՈՍՍԱԼԱԼԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Ժամանակակից նեո-պենտեկոստալ շարժման վերջին ալիքներից՝ խարիզմատ շարժման մեջ, ինչպես նաեւ այսօր առկա հոգեզալստական գրեթե բոլոր ուղղություններում, չնայած ինչ-ինչ երկրորդական տարբերությունների գոյության, մեկ սկզբունք պարտադիր եւ նույնն է գրեթե բոլորի համար: Դա լեզվախոսությունն է, որը ներկայացվում է իբրեւ ապացույց իրենց՝ Ս. Հոգով մկրտված կամ փրկված լինելու:

Այդ երեւույթի եզակիության եւ աստվածային ծագման գովասանքն ու քարոզչությունն այնքան է տարածվել, որ առանց խնդրի էության մեջ մտնելու, այն ընդունվում է որպես ճշմարտություն, այն էլ՝ միակ, ինչպես համոզված պնդում են բոլոր աղանդավորական շարժումների անդամները: Անշուշտ մեզ համար ավելի հետաքրքիր է ոչ թե այդ անկապ, անիմաստ բարբաջանքը, որը ներկայացնում են որպես «լեզու», այլ այն, թե այդ երեւույթը որքանո՞վ է համապատասխանում Ս. Գրքին, եւ արդյո՞ք Ս. Գիրքը խրախուսում եւ քաջալերում է այդ երեւույթը, ինչպես պնդում են այդ շարժման ռահվիրաները՝ Քենետ Հեյգինը, Ուլֆ Էքմանը, Յոնգի Չոն[2] եւ ուրիշներ:

Ստորեւ դիտարկենք Նոր Կտակարանի այն մի քանի հատվածները, որոնք պատմում են լեզուներով խոսելու մասին[3], եւ փորձենք պատասխանել այն հարցին, թե մերօրյա «լեզվախոսները» ի՞նչ կապ ունեն այդ համարների հետ:

Սակայն, մինչ այդ հարցերի քննարկմանն անցնելը, համառոտ ներկայացնենք այդ երեւույթն ընդհանրապես:

ԼԵԶՎԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՐԵՒՈՅԹԸ ՀԻՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Բ. դարի կեսին Փռյուգիայում նորադարձ նախկին մի հեթանոս քուրմ, Մոնտանոս անունով, իրեն հռչակեց մարգարե[4]: Երկու մարգարեուհի՝ Մաքսիմիլլան ու

* Սկիզբը՝ «Էջմիածին», 2012, Ա.-ԺԲ., 2013, Ա.-Բ.:

2 Տե՛ս **А. Дворкин**, *Сектоведение*, Н. Новгород, 2000, էջ 525-528:

3 Մարկ. ԺԶ. 17-18, Գործք Բ. 1-21, Ժ. 44-48, ԺԹ. 1-7, Ա. Կորնթ. ԺԲ.-ԺԴ. գլուխներ:

4 **Ե. Տէր-Մինասեանց,** Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. Ա., Ս. Էջմիածին, 1908, էջ 84:

Պրիսկիլլան, Մոնտանոսի համախոհներն էին: Այդ նոր պարակլետը՝ մխիթարիչը[5], հայտարարում էր, որ Հիսուս Քրիստոս պիտի իջնի Փռյուգիայում՝ Պեպուզա քաղաքի մոտ նա սկսում է իր համախոհներին հավաքել եւ սպասել Նրան: Նշենք, որ Սմիթը, Միլլերը Հիսուսին «իջեցնում էին» ամերիկյան մայրցամաքում, իրենց բնակավայրերի մոտ, ինչպես Մոնտանոսը:

Մոնտանականների քարոզները աշխարհի վախճանի մոտալուտ լինելու մասին, պահանջում էին նորանոր հայտնություններ՝ դրան սպասող եւ հավատացող ժողովրդի համար: Փռյուգիացի մարգարեն, որպես Վերջին օրերի աստվածային հայտնությունները աշխարհին հայտնող[6], ներկայացավ որպես «խողովակ», որի միջոցով այդ հայտնությունները տրվում էին աշխարհին: Ընդ որում, այդ հայտնությունները տրվում էին մարգարեին եւ մարգարեուհիներին հուզավառության (էկզալտիկ) վիճակում գտնվելիս: Պաշտամունքի ժամանակ ընկնելով մտահափշտակության (էքստազ) մեջ՝ այդ մարգարեները սկսում էին խոսել, իրենք էլ չհասկանալով թե ինչ, իսկ ներկաները գրի էին առնում այդ խոսքերը եւ այն ներկայացնում որպես Աստծու խոսք, որպես նոր հայտնություն:

Եւսեբիոս Կեսարացին, գրելով մոնտանականների մասին, այսպես է նկարագրում նրանց. «Շամբշաբար, անճահս (անպատշաճ) եւ օտարաձայն բարբառէին»[7]: «Շամբշաբար» բառը թարգմանվում է *մոլագար, խելագար*: Պաշտամունքային այդ ձեւը, երբ մոլագար, օտարաձայն բարբառում էին, նույնն է, ինչ որ այսօրվա շատ աղանդավորների պաշտամունքային կամ, ինչպես իրենք են ասում, «փառաբանման» ձեւը[8]: Մոնտանը բոլորին կոչ էր անում մաքրվելու, իրեն հայտնված տեսիլքների համաձայն, քանի որ շատ շուտով պիտի Հիսուս գար եւ հիմնադրեր Նոր Երուսաղեմը[9]: Նա իր հետեւորդներին պարտադրում էր ճգնակեցություն՝ ընտանիքներից ամուսնությունից հրաժարում: Մաքսիմիլլան իր մարգարեություններից մեկում գրում էր. *«Ինձանից հետո ուրիշ մարգարեուհի չի լինելու, այլ միայն՝ վախճանը»*[10]:

Ս. Գրիգոր Տաթեւացին իր «Գիրք Հարցմանց»-ում նշում է մի քանի երեւույթ,

5 Հովհ. ԺԴ. 26 համարի խոստումի իրականացումը:

6 Մորմոնները նույն բանն են ասում Ժոզեֆ Սմիթի մասին, Եհովայի վկաները՝ իրենց բրուկլինյան առաջնորդների:

7 **Եւսեբիոս Կեսարացի,** Պատմութիւն եկեղեցական, Վենետիկ, 1887, էջ 376:

8 Հիմնական տարբերությունը պատմական մոնտանականների եւ այսօրվա լեզվախոսների բարբաջանքների միջեւ էական է. Մոնտանի գրագիրները՝ Մաքսիմիլլան եւ Պրիսկիղան, կարողանում էին այդ շամբիշ խոսքերը գրի առնել, այսինքն՝ այդ էքստատիկ բարբաջանքը արտաքնապես լեզվի էր նմանվում, մինչդեռ նույն բանը անհնար է ասել այսօրվա «լեզվախոսների» մասին: Նրանց բարբաջանքը ոչ մի կապ չունի լեզվի հետ, էքստատիկ ծնծղաների անիմաստ ձայներ են եւ, անշուշտ, ամենեւին չեն հավակնում նախադասություն լինելու, որն ինչ-որ միտք է արտահայտում, ունի տրամաբանական կառուցվածք, ենթակա, ստորոգյալ եւ այլն: Իսկ ամենազավեշտալին այն է, որ Ս. Հոգու այդ «շնորհը» ունեցող քարոզիչները, Հայաստան այցելելիս, թարգմանչի միջոցով են շփվում լսարանի հետ:

9 Մորմոնական Հավատամքի 10–րդ կետում գրված է. «Մենք հավատում ենք ուղղակի իմաստով Իսրայելի Տան հավաքմանը, նրա տասը ցեղերի վերականգնմանը, Սիոնի՝ Նոր Երուսաղեմի կառուցմանը ամերիկյան աշխարհամասում...»: Ի տարբերություն Մոնտանի՝ Սմիթը Նոր Երուսաղեմը տեղադրում է ամերիկյան մայր ցամաքում:

10 Encyclopedia of religion, Motanism, vol. 15, N. Y., 1987, էջ 775:

որոնցով վերջին օրերին Նեռը պիտի խաբի մարդկանց: Դրանց թվում նշում է լեզվախոսությունը. «...եւ չար հոգիով խօսել պիտի տա այլ եւ այլ լեզուներ»[11]:

Եկեղեցու պատմությունը, մոնտանականությունից հետո, նման «շամբիշ» աղանդների այլեւս չի հիշատակում մինչեւ ԺԷ.-ԺԸ. դարերը, երբ բարենորոգչական շարժման (ռեֆորմացիա) հաջորդած բազում ճյուղավորումներ սկսեցին որդեգրել պաշտամունքային շամբիշ ձեւերը, իհարկե, հավատալով, որ այդ ունի աստվածային ծագում: Շոտլանդիայից Ջորջ Ֆոքսը Մոնտանոսի նման իրեն հռչակեց երկնային կոչում ունեցող՝ այս աշխարհը կարգի բերելու եւ Քրիստոնեությունը ուղղելու: Ֆոքսը գտնում էր, որ Ս. Գիրքը ինքն իրենից մեռած գիրք է ներկայացնում: Այն կենդանացնելու փոխարեն պետք է հավատացյալը պայծառանա, ներքնապես լուսավորվի Սուրբ Հոգու միջոցով: Իրենց հավաքներում, կենտրոնանալով, նրանք ձգտում էին ներքնապես լուսավորվել՝ լռության մեջ մնալով եւ երկարատեւ «ինքնախոկումներից» հետո պայծառություն ստացողն սկսում էր մարգարեանալ, որի խոսքերն ընդունում էին որպես նոր հայտնություն մարդկությանը: Այս դավանանքով, բնական է, նրանք ամենեւին կարիք չեն ունենա ո՛չ Սուրբ Գրքի, ո՛չ որեւէ խորհրդի կամ որեւէ կրոնական պահանջմունքի: Մոնտանոսի նման Ֆոքսն էլ երկնային հայտնությունները ստանում էր մտահափշտակության (էքստատիկ) վիճակում ինչպես ինքն էր ասում, անմիջապես Աստծուց, Սուրբ Հոգու միջոցով: Հետեւաբար, յուրաքանչյուրը, ինչպես պնդում էր Ֆոքսը, անմիջապես լուսավորվելով Սուրբ Հոգուց, իմանում էր ամեն անհրաժեշտ բան եւ, բնականաբար, կարիք չուներ ո՛չ Եկեղեցու, ո՛չ Սուրբ Գրքի: Քվակերները հավաքվելով(քվակեր՝ անգլերեն quake = դող, դողացնել, ըստ Փիլիպ. Բ.12 համարի) սպասում էին որպեսզի իրենցից մեկն ու մեկը «պայծառություն» ստանա, սկսի մարգարեանալ, հայտնի երկնային Աստծու կամքը: Պաշտամունքային այդ ձեւը, անշուշտ, հեթանոսական ծագում ունի, հոգեպաշտների՝ սպիրիտիստների այդ ժամանակ տարածված արարողություններից էր: Այսինքն էքստատիկ վիճակում հայտնությունների ստացումը ավելի օկուլտ-հեթանոսական բնագավառին է պատկանում, քան քրիստոնեական վարդապետության[12]:

ԺԸ.-ԺԹ. դարերին ի հայտ են գալիս նաեւ այլ կրոնական շարժումներ, որոնց հավատամքը նույնն է, ինչ որ այսօրվա խարիզմատիկ շարժմանը: Օրինակ՝ Անգլիայում Էդ. Իրվինգի (1792-1834) հետեւորդները՝ իրվինգիստները, քարոզում էին առաքելական ժամանակների շնորհների անհրաժեշտությունը, որոնք պիտի փոխանցվեին եւ ի հայտ գային նաեւ իրենց ժամանակներում: Այդ շնորհների մեջ իրվինգիստները տեսնում էին լեզվախոսությունը, բժշկությունը, մարգարեությունը եւ այլն:

---

11 «Գիրք հարցմանց», Կ. Պոլիս, 1728, էջ 708:

12 Լեզվախոսությունը բնորոշ է եղել նաեւ մորմոններին (նրանց Հավատամքի 8–րդ կետում գրված է. «Մենք հավատում ենք լեզուների պարգեւին...»), Աննա Լիի՝ անգլիական շեյքերներին, Դ. Բրեգի՝ Աստծո զավակներին եւ այլն: Նշենք միայն, որ մորմոնների նշված հոդվածը ամենեւին ակնարկ չէ Սմիթի՝ հին եգիպտերենից թարգմանիչ-լեզվաբան լինելու մասին, այլ՝ Պողոս առաքյալի Կորնթացիներին ուղղված թղթում նկարագրած լեզուների պարգեւի:

Իրվինգիստներին զուգահեռ Անգլիայում առաջ եկավ մի նոր շարժում եւս, որի հիմնադիրը եղավ Անգլիկան եկեղեցու քահանա Դերբին: Նա մերժում էր ամեն ինչ, քարոզելով կրոնական ազատություն՝ մերժելով բոլոր հավատամքներն ու հարանվանությունները: Նա միայն հաղորդությունն էր ընդունում որպես հավատացյալների միության խորհուրդ:

Հայտնի է, որ գլոսսալալիայի այս երեւույթը հայտնի է նաեւ հեթանոսական զանազան կրոններում՝ հնդկական Վեդաներում, տիբեթյան լամաիզմում[13]:

Պլատոնն իր աշխատություններում հաճախ է հիշում Դելֆյան գուշակին, որն ընկնելով էքստատիկ վիճակի մեջ, սկսում էր մարգարեանալ, անկապ-անկապ բարբաջել[14]: Նույն բանն էր ասում նաեւ Պլուտարքոսը դելֆյան գուշակի մասին: Այս փաստը պետք է նկատի ունենանք, երբ քննենք Կորնթոսի եկեղեցում լեզվախոսության հարցը:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՈԳԵԳԱԼՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

ԺԹ. դարի վերջին օրը՝ 1900 թ. դեկտեմբերի 31-ին, ամերիկյան մայրցամաքում ծնունդ առավ հերթական կրոնական շարժում, որը բնականաբար, ընդունելով մնացած բոլորի սխալ եւ միայն իր ճշմարտացի լինելու սկզբունքը, ինքնատիպ դարձավ իր չափազանց մակերեսային աստվածաբանական մտքով: Այդ շարժմամբ էր, որ հիմք դրվեց մակերեսային կրոնական շարժումների, որոնք չունենալով ոչ մի սուրբգրային հիմնավորում, աճեցին՝ հիմնավեցին եւ արմատավորվելով անհատների անձնական փորձառության վրա, ցանկացած քամուց շեղվելով եւ տարուբերվելով դավանական լաբիրինթոսներում, ամեն անգամ ընդլայնվելով եւ տարածվելով՝ նորանոր անդամներ ներգրավելով, որոնց կրոնական արմատները նույնքան մակերեսային են... Հոգեգալստական կամ Պենտեկոստեական շարժումն էր, որ ծնվեց Ի. դարի արշալույսին...

(Շարունակելի)

ՂԵՒՈՆԴ ՔԱՀԱՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ

13 Տես **Glossalalia** հոդվածը Encyclopedia of religion, բառարանում, vol. 5, N. Y. , էջ 563:

14 Տես **Richard C. Schwab,** *Let The Bible Speak... About Tongues*, Grand Rapids, Michigan, 1983, էջ 4: